



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՇՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎԻ ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ  
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը**

**ԱՆԴԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Քաղ. Երեւան

20 փետրվարի 2013թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի  
թիվ 1 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ռ. Նազարյանի  
Անդամակցությամբ՝ Վ. Հովհաննիսյանի  
Ա. Խաչափրյանի

Ուսումնասիրելով քաղ. Սամվել Մնացականյանի դիմումով գործը  
քննության ընդունելու մասին հարցը,

**Պ Ա Ր Զ Ե Յ.**

Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ քաղաքացի Սամվել Մնացականյանը դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով.

«1. ՀՀ Սահմանադրության 19, 92, 93, 94, 97-րդ հոդվածներին հակասող և անվավեր ճանաչել ՀՀ դատական օրենսգրքի 153-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ ենթակետը,

2. ՀՀ Սահմանադրության 19, 92, 93, 94, 97-րդ հոդվածներին հակասող և անվավեր ճանաչել ՀՀ դատական օրենսգրքի 153-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ ենթակետը՝ իրավակիրառական պրակտիկայի կողմից դրան դրված մեկնաբանությամբ, այնքանով, որքանով դադարակորի կողմից վարքագծի կանոնների խախտումների շարքին է դասում դադարակորի կողմից արդարադարձություն իրականացնելիս օրենքի խախտում թույլ տալը և/կամ հակասող և անվավեր ճանաչել ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածին,

կամ՝

ճանաչել ՀՀ դադարկան օրենսգրքի 153-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ ենթակետը համապատասխանող ՀՀ Սահմանադրությանը՝ սույն դիմումի մեջ արդահայփած իրավական դիրքորոշումների շրջանակներում,

ճանաչել ՀՀ դադարկան օրենսգրքի 153-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ ենթակետը համապատասխանող ՀՀ Սահմանադրությանը՝ սույն դիմումի մեջ արդահայփած իրավական դիրքորոշումների շրջանակներում»:

Դիմողը նշում է, որ դադարկող անկախությունը երաշխավորող մի շարք իրավական փաստաթղթերում ամրագրված սկզբունքներն արգելում են վերադաս դադարանից բացի որևէ այլ մարմնի միջամբել դադարկողի կայացրած որոշման բովանդակային մասին:

Դիմողի կարծիքով՝ իրավակիրառական պրակտիկան վիճարկվող դրույթներին հաղորդել է այնպիսի իմաստ, ըստ որի՝ խնդրո առարկա դրույթները հնարավորություն են դալիս դադարկան ակտերի բողոքարկման վարույթից դուրս և դադարանության կողմ չհանդիսացող անձի պահանջով քննության առարկա դարձնել օրինական ուժի մեջ մտած դադարկան ակտի իրավաչափությունը՝ հանգելով դադարկան ակտ կայացրած դադարկողի համար իրավական բացասական հետևանքներ առաջացնող եզրահանգումների:

Ըստ դիմողի՝ եթե սպորադաս դադարանի կողմից թույլ փրկած դադարական կամ նյութական նորմի խախորումը ուղղվել է վերադաս դադարանի կողմից, ապա իրավունքի խախորում գրեղի չի ունեցել, քանի որ դադարկան համակարգը՝ որպես մեկ ամբողջություն, ուղղել է այն, խախորում թույլ չի փակել: Մինչդեռ խնդրո առարկա դրույթը հնարավորություն է դալիս սպորադաս դադարանի դադարկողին կարգապահական պարագաներության ենթարկելու նախադրյալներ սպեցիալ՝ վերադաս դադարանի կողմից վերջինիս կայացված դադարկան ակտի իրավաչափությունը գնահատելու արդյունքում՝ դադարական իրավունքի նորմի խախորում արձանագրելիս:

Ելնելով դիմումի և կից փաստաթղթերի ուսումնասիրությունից և դեկավարվելով «Սահմանադրական դադարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ և 69-րդ հոդվածների պահանջներով, դադարկան կազմը գրնում է, որ գործի քննությունը սահմանադրական դադարանի կողմից ենթակա է մերժման հետևյալ պարճառաբանությամբ.

- Վիճարկվող դրույթների հակասահմանադրականությունը չի կարող գնահավաքել այլ դրույթներից մեկուսացած. այդ նպարակով հարկ է այդ դրույթները դիմումի այլ դրույթների հետ համակարգային փոխկապակցվածության մեջ: Տվյալ դեպքում վիճարկվող դրույթների ենթադրյալ հակասահմանադրականությունը պարզելու համար անհրաժեշտ է այն դիմումի ՀՀ դադարկան օրենսգրքի մի շարք իրավանորմերի, մասնավորապես, ՀՀ դա-

փական օրենսգրքի 158-րդ հոդվածի 1-ին մասի և 111-րդ հոդվածի 6-րդ մասի հետ համակարգային վերլուծության համապեքսպում: ՀՀ սահմանադրական դադարանն իր ՍԴՈ-1063 որոշման մեջ նշյալ դրույթների վերաբերյալ արդահայքել է իրավական դիրքորոշումներ առ այն, որ ՀՀ դադարական օրենսգրքի 158-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված «գործում է որպես դադարան» եզրույթի առնչությամբ նկատի պես է ունենալ արդարադապության խորհրդի գործունեության կարգը, ինչը փաստվում է նաև ՀՀ դադարական օրենսգրքի 158-րդ հոդվածի 1-ին մասով նախադեսված իրավակարգավորմամբ: Ընթացակարգերի իմաստով արդարադապության խորհրդի դադարանացնում է գործի արդար, իրապարակային և ողջամիտ ժամկետներում քննություն: Իսկ ՀՀ դադարական օրենսգրքի 158-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ արդարադապության խորհրդում գործերի քննության կարգի նկարմամբ կիրառվում են ՀՀ վարչական դադարապության օրենսգրքի նորմերն այնքանով, որքանով դրանք իրենց էությամբ կիրառելի են արդարադապության խորհրդում գործի քննության նկարմամբ և չեն հակասում ՀՀ դադարական օրենսգրքի նորմերին: Այս համապեքսպում ՀՀ սահմանադրական դադարանը փաստել է, որ նման կանոնակարգմամբ օրենսդիրն արդարադապության խորհրդի գործունեության հիմքում դնում է արդար քննության համար անհրաժեշտ երաշխիքներ՝ ուղղված ՀՀ Սահմանադրության 18 և 19-րդ հոդվածներով նախադեսված իրավունքների իրացման ապահովմանը: Նշյալ իրավական դիրքորոշումների համապեքսպում դիմողի առաջադրած իրավական փաստարկներն այն մասին, որ խնդրո առարկա դրույթները հնարավորություն են դալիս դադարական ակտերի բողոքարկման վարույթից դուրս և դադարապության կողմ չհանդիսացող անձի պահանջով քննության առարկա դարձնել օրինական ուժի մեջ մտած դադարական ակտի իրավաչափությունը՝ հանգելով դադարական ակտ կայացրած դադարակի համար իրավական բացասական հեփեանքներ առաջացնող եզրահանգումների, ակնհայտ անհիմն են և սահմանադրական վեճ չեն առաջացնում.

- գործի դադարապարական պարմությունը վկայում է, որ ՀՀ վարչական դադարանում, այնուինը՝ ՀՀ վերաբննիչ վարչական և վճռաբեկ դադարաններում քննարկվել է ՀՀ Նախագահի 11.07.2011 թվականի հրամանագիրն անվալեր ճանաչելու վերաբերյալ պահանջը, ընդ որում, որպես նշյալ հրամանագիրն անվալեր ճանաչելու հիմք դիմողը նշել է, որ այն ընդունվել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի միշտաք դրույթների խախմբամբ: Այսինքն՝ խնդրո առարկա իրավիճակում ակնհայտ է, որ կոնկրետ փվյալ դեպքում դիմոդի համար առաջացած անբարենպաստ հանգամանքներն ընդունենք նրա նկարմամբ կայացված համապարասխան դադարական ակտերի արդյունք են, հեփեաբար, խնդրո առարկա դրույթների սահմանադրականությունը վիճարկելով՝ դիմոդ

ընդամենը բարձրացնում է դրանց կիրառման իրավաչափության հարց՝ փորձելով այն քողարկել խնդրո առարկա դրույթի հակասահմանադրականության վիճարկմամբ։ Փաստորեն դիմողը, ձևականորեն վիճարկելով օրենքի դրույթների սահմանադրականությունը, ըստ էության բարձրացնում է այդ դրույթների կիրառման իրավաչափության հարց։

Դեկավարվելով ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2009 թվականի մարտի 17-ի ՍԴՀՈ-21 որոշման մեջ արդահայփած իրավական դիրքորոշմամբ, ըստ որի՝ բոլոր այն դեպքերում, երբ դիմոդը, ձևականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարցը, ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց, այդպիսի դիմումները ենթակա են մերժման՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32 հոդվածի 1-ին կետի հիմքով՝ որպես սահմանադրական դատարանի քննության ենթակա հարց չառաջադրող դիմումներ։ Եթեւաբար, դատական կազմը գրնում է, որ այս համարեքսպում առկա է դիմումի քննության ընդունումը մերժելու՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին կետով նախագեսված հիմք։

Ելնելով վերոշարադրյալից և դեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին, 6-րդ կետերով և 69-րդ հոդվածի 7-րդ մասով, Նայասպանի Հանրապետության սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմը

## ՈՐՈՇԵՅ.

Քաղ. Սամվել Մնացականյանի դիմումով գործի քննության ընդունումը մերժել։



20 փետրվարի 2013թվականի

ՍԴԿՈ/1-8